



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թիւ 1316  
Ապրիլ 8, 1993

Արժանաշնորհ  
Տ. Մամբրէ Ա. Քհնյ. Գուգուեան  
Հովի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նախագահ Ծխական Խորհուրդի  
Գէլյնպրիւն.

Սիրելի Տէր Մամբրէ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Փետրուար 16, 1993 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 7, 1993-ին, եւ այդ առթիւ ընդրուած են Ծխական Խորհուրդին վեց անդամներ: Կու տաք բուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

- Կրեկըրի Հիւնդեան
- Ժորճ Յարութիւնեան
- Վայրլէթ Կոշտիկեան
- Ծերըլտ Պօղոսեան
- Սարգիս Պօղոսեան Կրտ.
- Ռիչըրտ Սըրապեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ կը փափաքինք ձեզի տեղեկացնել թէ մեզի տրուած տեղեկութեան համաձայն՝ ձեր համայնքը 1992 տարուան հաշւոյն 1,034.24 տողարի յետնեալ մը ունի: Հաճեցէք ստուգել այս պարագան եւ անհրաժեշտ կարգադրութիւնը ընել:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունիւ

ԽԱԺԱԿ ԱՐԲ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ